

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Գ. ՄԻՐԶԱՅԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

Ժողովրդական երգերը ժողովել, ձայնագրել, ներդաշնակել ու համերգ կազմել հայկական անմխիթար կեանքում արդէն դրական գործնութեան ձև է ստացել և ունի յաջողութեան որոշ ասպարէզ:

Դժուար չէ մի երգ գրել, կամ աւելի լաւ է ասել, որեւէ մի բանաստեղծութիւն ձայների վերածել, մելօդիա կազմել, որը և կախուած է լինում ստեղծագործողի հասկացողութիւնից ու գլխաւորապէս նրա քմահաճոյքից: Այս կերպ շարագրուած միլօդիաները չեն կազմում որևէ խօսքերի սեպականութիւն, նոյն իսկ այն խօսքերի, որոնց համար երգը ձայնագրուել է: Չեն կազմում հարադատութիւն, որովհետև չեն արտայայտում այդ խօսքերի իմաստը: Օրինակ, «Արաքսի արտասուքը» մի բանաստեղծութիւն է, ուր նկարագրուած է վշտահար գետը, նրա դարևոր ընթացքը, նրա նախկին փառքը, ներկայ անարգանքը, ապա գետի բողոքը ու ոլոր մոլոր սահումը: Իսկ ի՞նչ է ասում նրա համար ձայնագրուած մօտիւր:— Բանաստեղծի խոհերը և Արաքսի վրդովուած մէջք ուռցնելը արտայայտում են այդտեղ համահաւասար զգացմունքով սկզբից մինչև վերջը մնալով նոյն չափուած ու ծանրութեամբ տեմպի տակ: Այս գոյնի եղանակները կարող են հեշտութեամբ խլուել այն խօսքերից, որոնց համար ձայնագրուել են և անխտիր գործածուել այլ խօսքերի, այլ բանաստեղծութիւնների համար:

Երաժշտական այս ձևը, որ աւելի հաճելի, քաղցրալուր, զգալից ու դիւրըմբռնելի է, իտալական ծագում ունի և երկար ժամանակից ի վեր տիրապետում է ամենուրեք:

Սակայն այս ձևը բաւարարեցուցիչ չէր: Մեծ ճաշակները ճգնում էին վերադառնալու պրիմետև մարդու հասկացողութեան, այսինքն երգը դարձնել որևէ մտքի, զգացմունքի բացարձակ

արտայայտութիւն: Բեթհովէն արդէն ուժգին չափով բարձրացրել էր երաժշտութեան հոգը երբ եկաւ Վազնէր, ձևակերպեց, կազմեց ու դարձաւ դրամատիկ-երաժշտութեան հայր: Գրաւոր արտայայտութիւն նա չէր կամենում տալ որևէ պատահական ու մտացածին եղանակ, այլ այնպիսի մօտիւ, որ կազմէ այդ խօսքերի, այդ գրաւոր մտքերի ամենաճիշտ արտայայտութիւնը: Եւ ահա նրա գրչի գրաւոր ու երաժշտական արտայայտութիւնները ձուլուում են ի մի, կազմում մի ներդաշնակ ամբողջութիւն: Ձայները ստանում են խօսքերի արտայայտութիւն: Նղանակը շաղկապւում է բանականութեան հետ և հիմք է դրւում փիլիսոփայական երաժշտութեան:

Այդ էր ցանկանում Վազնէրը:

Որևէ հոգեկան տրամադրութիւն արտայայտում է շարժումով ու ձայնով: Նախնական մարդը իր հոգու տրամադրութիւնը արտայայտել է պարի ու երգի մէջ: Թէ որն է այս երկուսից առաջինը ծնուել, յայտնի չէ, միայն նրանք շաղկապած են իրար հետ այնպիսի նրբութեամբ, որ պարեցատկումները ու երգ-ձայները միասին ունեն ու արտայայտում են միևնոյն միտքը: Երգի պարզ փիլիսոփայութեան նախնական ձևն է այս: Եւ հենց այս վերածնութիւնն էր երազում Վազնէրը:

Իր գործի ամբողջութեան հասնելու, իր երաժշտական մեծութիւնը հրապարակ հանելու համար Վազնէր չը բաւականացաւ բանաստեղծական զանազան կտորներ ընտրել ու նրանց ձայների վերածել: Այդ սովորական հասկացողութիւն էր: Նա կամեցաւ աւելի խոր ու անյայտ դժուարութիւնների նուիրուել:—Եւ ահա հրապարակ եկաւ «Նիբելունգները», գերմանական ժողովրդի ամենախոշոր ստեղծագործութիւնը: Նա ժողովեց, զտեց, խմբակցեց և տուաւ երաժշտական ամենաբարդ արտայայտութիւն:

Խիստ դժուարին էր այս գործը, սակայն Վազնէրի դափնինները ոգևորութիւն առաջ բերին համայն աշխարհում: Ժողովրդական մօտիւնները կրկնակի արժէք ստացան և դրա հետ հանդերձ ժողովրդական երգեր կազմողները փոխեցին իրենց գործնէութեան ձևը: Պատահական կամակորութիւնները վերածուեցին երաժշտական խիստ սխտեմի և այլ ևս ժողովրդական ստեղծագործութիւնը հրապարակ եկաւ իր նախնական արտայայտութեամբ, զտած ու ներդաշնակ:

Հայ երաժշտական անդամուանը բարեբեր էր, իսկ ժողովրդական երգը առատ, այնպէս որ գործնէութեան անպարէզը խիստ լայն էր, ուր և նետուեցին հմուտ մարդիկ: Գործնէութեան

թեան այդ ասպարիզում Եկմալեանը տուաւ խոշոր արդիւնք, իսկ Կարամուզան դարձաւ երգերի ժողովրդացման կարապետ: Ապա սկսեցին ծաղիկը և երիտասարդ ոյժեր, որոնցից ամենափայլունը անպայման հայր Կոմիտասն է:

Այդ ասպարիզում մի խոշոր ոյժ է և պ. Գ. Միրզայեան: Միւնին, որի առջին համերգը տեղի ունեցաւ մայիսի 30-ին՝ արտիստիք ընկ. դահլիճում: Պատահական տարրերից կազմուած այդ համերգում, Միրզայեանը ցոյց տուեց իւր երաժշտական, ինչպէս և իր ուսուցչական ընդունակութիւնն ու եռանդը: Թարմ էնեբգիայի հետ նա միապաղաղում է իւր մէջ և երաժշտական հասկացողութիւն: Նա օրիգինէլ է, նա ունի ներզաշնակման առանձնայատուկ դրօշմն և իբրեւ այսպիսին նա կը տայ անպայման ժողովրդական երգերի նոր շիջաւ: Սակայն նա եւրոպական տեմպի խիստ սիրահար է, իսկ այդ, առ այժմ՝ խանգարում է արեւելեան մօտիւններին: Արեւելեան երգը, ժողովրդական երգը բմահաճ է, երաժշտութեան սահմաններում նրա ոտնձգութիւնները բացառական չեն: Այդտեղ յաճախ լսում ենք այնպիսի ձայներ, որ երաժշտական հասկացողութեան մէջ գոյութիւն չունին, որոնք անհատական քիմքի պատահական արտայայտութիւն են: Այդ մօմենտները կանոնաւորել ու չափի տակ դնել անկարելի է, իսկ դուրս ձգել թոյլ չի տրոււմ, մնում է ենթարկուել այդ կապրիզին ու թոյլ տալ որ նա արտայայտուի մի ձայնի, մի հատիկ օրդանի մէջ: Այդպէս վարուել սիրում էր առանձնապէս Մոցարտը:

Միրզայեանի համերգը ունէր ընդարձակ ծրագիր, մասնակցութեամբ 100 հոգի երկսեռ խմբի, որ և անցաւ յաջող, սիրահար հասարակութեան օվացիաների տակ: Ամենայաջող համարը պէտք է համարել «Արիք Հայկազունք», կատարեալ նորամշակ ու խիստ ուժգին տեմպով: Միրզայեանի երաժշտական ընդունակութեամբ հետաքրքրուող մարդկանց առանձնապէս ցանկալի էր նրա անպահական երաժշտութիւնից մի կտոր լսել, որից սակայն ծրագրի մէջ միայն մի համար էր նշանակուած, և որը դժբաղատաբար անցաւ ոչ յաջող, շնորհիւ երգի ու նուազակցման անհամաչափութեան: Բայց և այնպէս, ամենուրէք նկատուում է Միրզայեանի ընդունակութիւնը, ապագայի մեծ յոյսերով...